Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 31-ի N 1484-Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
օգոստոսի 30-ի N 954-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) դասարանների կազմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Դասարանը առարկայական միևնույն ծրագիրն ուսումնասիրող սովորողներից կազմված ուսումնական խումբ է:

3. Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա՝ դպրոցի տնօրենի հրամանով, կրթական 1-ին և 2-րդ աստիճաններում (տարրական և հիմնական)՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, կրթական 3-րդ աստիճանում (միջնակարգ)՝ յուրաքանչյուր կիսամյակի համար՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանով հաստատված՝ Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջների N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերի պահանջները:

4. Հաստատությունում յուրաքանչյուր հաջորդ դասարան ձևավորվում է, եթե սովորողների թիվը գերազանցում է՝

1) սույն որոշման 2-րդ կետում ներկայացված նորմերով սահմանված դասարանում սովորողների թվին.

2) սույն հավելվածի 3-րդ կետում ներկայացված նորմերով սահմանված դասարանում սովորողների թվին:

5. Բազմահամակազմ դասարան կարող է ձևավորվել, եթե հաստատության յուրաքանչյուր դասարանում սովորողների թիվը՝

1) սույն որոշման 2-րդ կետով սահմանված՝ դասարանի սովորողների առավելագույն թվի կեսից պակաս է.

2) սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ դասարանի սովորողների առավելագույն թվի կեսից պակաս է:

6. Հաստատությունում միևնույն առարկան ուսումնասիրող բազմահամակազմ դասարաններ կարող են ձևավորվել հետևյալ բնագավառներով՝

1) արհեստ և արվեստ.

2) ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

7. Բազմահամակազմ դասարան կարող է ձևավորվել իրար հաջորդող առավելագույնը երեք դասարանների սովորողներից:

8. Հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի, հատուկ դպրոցի դասարաններում (ուսումնական խմբերում) սովորողների թիվը սահմանվում է՝

1) առավելագույնը 15 սովորող.

2) կրթության առանձնահատուկ պայմանների՝ մանկավարժահոգեբանական 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներով համալրված դասարաններում (ուսումնական խմբերում)՝ առավելագույնը 6 սովորող:

9. Դպրոցում միևնույն տարիքային խմբի մեկից ավելի դասարաններ ունենալու պարագայում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները դասարաններում բաշխվում են համաչափ: Դպրոցում յուրաքանչյուր դասարանից մեկական լինելու պարագայում՝ դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը չի գերազանցում դասարանի

սովորողների թվի 10 %-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ դպրոցի՝ տվյալ տարիքային խմբի միակ դասարանն է կամ համայնքի միակ դպրոցն է:

10. Սույն հավելվածի 3-րդ կետում ներկայացված նորմերով սահմանված սովորողների առավելագույն թվից պակաս թվով դասարան (ուսումնական խումբ) կարող է կազմավորվել խորացված ուսուցման կազմակերպման և այլ ուսումնական նպատակներով:

11. Մասնագիտացված հանրակրթական դպրոցներում դասարանները ձևավորվում են հաստատության կանոնադրությանը համապատասխան:

12. Միջնակարգ դպրոցի 3-րդ աստիճանում սովորողների մասնագիտական նախասիրություններն ու կողմնորոշումը զարգացնելու նպատակով ձևավորվում են միևնույն առարկան կամ միևնույն բնագավառում միևնույն առարկայական ծրագիրն ուսումնասիրող առանձին խմբեր՝ համաձայն սույն հավելվածի 3-րդ կետի:

13. Դասարանում սովորողների նվազագույն թիվը սահմանվում է 1 սովորող:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ